Հաստատում եմ՝

ՀՀ Սյունիքի մարզի

«Մեղրու թիվ 1 մ/դ» ՊՈԱԿ-ի

Տնօրեն՝ Ռ. Գևորգյան

Հավանության է արժանացել

մ/մ թիվ նիստում

մ/մ նախագահ Ն. Սարգսյան

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ ՀԱՆՐԱՀԱՇՎԻՑ ԵՎ ԹԳՀԳ-ԻՑ

Դասարան- VII

Նախագծի անվանումը՝ Արտարժույթի վարքը Հայաստանում

Նախագծի ղեկավարներ՝ Ռ. Գևորգյան, Լ. Մանուկյան

2023-2024 ուստարի

Ուսումնական նախագծի պլան

Դասարան՝ 7-րդ

Առարկաներ՝ Հանրահաշիվ և ԹԳՀԳ

Ղեկավարներ՝ Ռ. Գևորգյան, Լ. Մանուկյան

Միջառարկայական կապ՝ մաթեմատիկա, տնտեսագիտություն, հայոց լեզու, ԹԳՀԳ:

Աշխատանքի ձևը՝ արտադասարանական հետազոտություն, դասարանական քննարկումներ, գործողությունների իրականացում:

	Նախագծի անվանումը՝ Արտարժույթի վարքը Հայաստանում	
	Հիմնախնդիրը՝ Արտարժույթի աճի և անկման գրանցման գրաֆիկական պատկերն՝ ըստ տարբեր ժամանակահատվածների:	
	Նպատակը	Արագ կողմնորոշվելու կարողություն, արժեքների ձևավորում, համատեղ պլանավորում, մաթեմատիկական և ֆինանսական գիտելիքների համատեղ կիրառում: Ուղղորդել սովորողներին հետազոտել տարբեր բանկերում արտարժույթի վարքը: Զարգացնել հմտություններ ծանոթանալու և վերլուծելու առաջադրված հիմնախնդիրներին: Միևնույն արտարժույթի փոխարժեքի վերաբերյալ տարբեր ֆինանսական կառույցներից տվյալների հավաքագրում, համեմատություն և առք ու վաճառքի դեպքում լավագույն տարբերակի ընտրություն: Խելամիտ և հիմնավորված մտքերի կառուցում, համադասարանցիների կատարած աշխատանքների հարգանք և գնահատում, ստացված արդյունքների համեմատում:

		Ձևավորել որոնողական համակարգերից օգտվելու, ինչպես նաև տեղեկույթի սկզբնաղբյուրի հավաստիության և արժեքի գնահատման և տարբեր տեսակի տեղեկույթների հետ աշխատելու հմտություններ:
	Խնդիրները	Ուղղորդել սովորողներին Հետևել որ սովորողները համագործակցեն, բայց նաև աշխատեն ինքնուրույն: Հաճախակի քննարրկել տարվող աշխատանքների ընթացքը և արդյունքները: Հետևել ժամանակացույցին:
	Վերջնարդյունքները	Սովորողները կկարողանան Հավաքագրել և կառուցել գրաֆիկ ըստ օրերի և տարադրամի արժեքների: Գրաֆիկները կառուցելիս կարելի է մի քանի փոխանակման աղբյուրներ տվյալներ միջինացնել: Համեմատել մյուս տարադրամների գների փոփոխության հետ: Քննարկել և պարզաբանել տարադրամների գների տատանման պատճառները և գնալ եզրահանգման , թե երբ պետք է գնել տվյալ տարադրամը: Կկարողանա գտնել տեղեկատվության ճիշտ աղբյուրներ, առավել խորացված և առաջադեմ եղանակով որոնել ինտերնետ ռեսուրսները: Կկարողանա նկարագրել ներկայիս միջոցառումները /նորությունները և համակարգչային զարգացող տեխնոլոգիաները, նաև դրանց հնարավոր ազդեցությունը կրթության, աշխատատեղերի, անհատների, համայնքների և

		գլոբալ հասարակության վրա: Կկարողանա աշխատել մուլտիմեդիայի հետ, ստեղծել ավտոմատ կերպով աշխատող պրեզենտացիա որևէ թիրախային լսարանի համար՝ օգտագործելով սահիկից սահիկ ավտոմատ կերպով անցնելու գործիքները և կիրառելով առկա անիմացիաները: Կկարողանա աշխատանք թվային աղյուսակների հետ. ստեղծել որոշակի նպատակ ունեցող աշխատանքային թվային աղյուսակ, մեթոդաբար աշխատել աղյուսակի դիզայնի և մշակման վրա, կկարողանա թեստավորել աղյուսակը, ուղղել և փոփոխել այն:
	Կարողունակություններ,որոնք կզարգանան այս նախագծի ընթացքում	1. սովորել սովորելու կարողունակություն 2. ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն 3. մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակաություն 4. լեզվական գրագիտություն և կարողունակություն 5. թվային և մեդիա կարողունակություն
	Աշխատանքային խմբերի առաջադրանքները՝ ըստ խմբերի:	1-ին խումբ՝ դոլլար 2-րդ խումբ՝ եվրո՝ 3-րդ խումբ՝ ռուբլի
		Տալ հանձնարարություն յուրաքանչյուր խմբին՝ 1 ամսվա կտրվածքով ուսումնասիրել և հավաքագրել տարադրամի փոխանակման կետերի և բանկերի կողմից առաջարկների տվյալները տրված տարադրամի արժեքների փոփոխության վերաբերյալ: 1, Կառուցել գրֆիկ ըստ օրերի և տարադրամի արժեքների: Գրաֆիկներ կառուցելիս կարելի է մի քանի փոխանակման

		աղբյուրների տվյալները միջինացնել 2, Համեմատել մյուս տարադրամների գների փոփոխության հետ: 3,Քննարկել և պարզաբանել տարադրամների գների տատանման պատճառները և գալ եզրահանգման , թե երբ պետք է գնել տվյալ տարադրամը:
		Քայլ 1 Յուրաքանչյուր շաբաթվա ընթացքում ուսուցիչը կատարում է հարցում կատարված աշխատանքների վերաբերյալ և անհրաժեշտության դեպքում կատարում փոքրիկ հուշումներ: Քայլ 2 Խմբերը տեղեկացնում են թե ինչ հաջողություններ և ինչ դժվարություններ են ունեցել այդ ընթացքում, հայտնում են իրենց մտքերը, անհրաժեշտության դեպքում ստանում խորհուրդներ: Քայլ 3Հանձնարարել վերջնական տեսքի բերել կատարված աշխատանքները և պատրաստել ներկայացման : Ներկայացման ձևը կարող են ընտրել սովորողները: Քայլ 4 Խմբերը կատարում են վերջնական վերլուծություն, արդյունքների ներկայացման ձևի ընտրություն, անհրաժեշտ պարագաների նախապատրաստում:
	Հաշվետու դաս	Խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքները, կատարում եզրակացություններ և պատասխանում հարցերին, տրամադրվում է 10ր յուրաքանչյուր խմբին: Յուրաքանչյուր խումբ դասը ներկայացվում է տեսաներկայացման միջոցով:
		Ուսուցիչները ամփոփում են արդյունքները տալիս բնութագրող գնահատում, ներկաները հայտնում են

	Ամփոփում և գնահատում:	կարծիքներ: 10 րոպե ամփոփում, կարծիքների և առաջարկությունների ներկայացում: Գնահատումն իրականացնել աշխատանքների ամբողջ ընթացքում: Գնահատել աշակերտների առանձին աշխատանքները և նախագիծը, որպես մեկ ընդհանուր աշխատանք: Արդյունքների գնահատում:
	Հետազոտության աղբյուրներ	1. https://www.ardshinbank.am/ 2. https://www.vtb.am/ 3. https://www.acba.am/ 4. https://www.geogebra.org/